22 Իսկ Վարազդատ թագաւորն պատգամ յղէր պատասխանոյն առ զաւրավարն Մանուէլ, եւ ասէր. Եւ քանզի չեմ Արշակունի, զի՞ եդի զթագ նախնեաց իմոց Արշակունեացն, եւ կալայ զաշխարհ առաջնոց իմոց, եւ խնդրեցի զվրէժ հաւրեղբաւրն իմոյ Պապայ ի չարագործ յեղբաւրէն քումմէ ի Մուշեղայ, բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, զի քեզէն իսկ ասացեր՝ բաս յերկրէն յաշխարհէն Ճենաց եմք լեալք թագաւորք ի բնութենէ[1], եւ այսր պանդուխտք եմք եկեալք, արդ ըստ աւրինակի եղբաւրն քո մի՛ մեռանիր: *23* Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեցի[2] զքեզ. երթ գնա յերկիրն Ճենաց, անդ կեաց, եւ անդէն թագաւորեսջիր յերկրին քում: *24* Ապա թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ի ձեռաց իմոց որպէս եւ Մուշեղն մեռաւ:

25 Իսկ յորժամ բազում անգամ երթեալք եկեալք պատգամաւորք՝ բազում խստագոյն քան զխստագոյն բանս կսկծանաց առ միմեանս յղէին, եւ յետ այսորիկ ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել: *26* Իսկ ի հասեալ ի ժամադիր ժամուն, եկեալ տային ընդ միմեանս պատերազմ: *27* Եւ թագաւորն Վարազդատ առնոյր զզաւրն իւրոյ բանակին, եւ գնայր հասանէր ի տեղի ճակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ ի պատերազմ. սոյնպէս եւ սա պատրաստագոյն քան զնոսա: *28* Եւ Մանուէլ սպարապետն հասանէր իւրով գնդաւն ի նոյն տեղի. եւ ի դաշտին Կարնոյ լինէին խառնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս բախելոցն:

29 Թագաւորն Վարազդատ եւ սպարապետն Մանուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին: *30* Իբրեւ զաչս ի վեր ամբառնայր արքայն Վարազդատ, եւ նայէր ընդ գալն իւր եւ տեսանէր զսպարապետն Մանուէլն, ի մեծութենէն հասակին եւ ի շքեղութենէ անձինն եւ յամրակուռ յերկաթապատ յոտիցն մինչեւ ցգլուխն առ հասարակ յանվթար զինէն, ի հաստամեստ յանձնէն, եւ ի հաստատուն երիվարէն եւ յասպազէն[3] վառելոյն յանշարժ սպառազինէն, համարեցաւ կշռեաց զնա ի միտս իւր իբրեւ զլեառն մի բարձր զանմատոյց: *31* Սակայն ածեալ զմահ ընդ միտս՝ յարձակեցաւ. զի այնուհետեւ չունէր ակն անձինն ապրելոյ: *32* Սակայն զի մանուկ մարդ էր արքայն Վարազդատ, իբրեւ ետես զնա այնպէս՝ զի չէր ինչ կռուոյ տեղեակ, եաթ զմտաւ թէ՝ ի զրահսն ոչ ինչ կարիցէ նիզակ գործել, առ ձեռաց կորովութիւնն զնիզակն ընդ բերան արկանէր զաւրավարին Մանուէլի: *33* Իսկ Մանուէլ բուռն հարկանէր զնիզակէն. հանեալ ի նմանէ զնիզակատէգն՝ ընդ իւր թուրծն հանէր, եւ բազում զիւր թափէր զատամունսն, զնիզակն յինքն հանէր յարքայէն:

---

1 *Թերեւս* ի բնէ

2 *Յօր.* արձակեալ լիցի

3 *Յամենայն օրինակս՝* յապաղէն